Տ. ՆԱԹԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՁՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(16 ապրիլի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ»:
(Յովհ. ԺԱ. 25)

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր մարդկության ամենասպասված լուրն է գալիս՝ մեկ անգամ եւս մեզ հաստատելու այս կյանքի մեջ, հաստատելու մեր հավատքի մեջ, որովհետեւ մեր հավատքի վերջը Քրիստոսի պես հարությունն է:

«Ես եմ հարությունը եւ կյանքը,— ասում է մեր Փրկիչը,— եւ եթե մեկը մեռնի, պիտի ապրի» (Հովհ. ԺԱ. 25): Մարդկության կյանքը փոխվեց այն օրից, երբ մեղքի պատճառով մահը մտավ աշխարհ, եւ մարդը չէր կարողանում հասկանալ, թե ինչ է այդ: Հազարամյակներ շարունակ մարդիկ զբաղված էին, եւ այսօր էլ կան, որ զբաղվում են կյանքի եւ մահվան՝ իբրեւ առեղծվածի լուծմամբ: Եւ մարդ արարածը, իր իսկ մեղքի պատճառով Աստծուց հեռանալով, դարձավ մահկանացու, սկսեց մահից ազատվելու տարբեր ուղիներ փնտրել, քանի որ կյանքը նրա համար ամենաթանկագին, ամենարժեքավոր բանն է: Եւ այդ փնտրտուքների ճանապարհներին ամեն ինչի դիմեց. իր համար ստեղծեց փրկող աստվածներ, հետո՝ կուռքեր, միջնադարում նույնիսկ ալքիմիկոսներն սկսեցին որոշակի նյութեր ու դեղամիջոց փնտրել մարդու անմահության համար: Եւ այդ ամբողջ ժամանակաընթացքում մարդ արարածն իր մահվան պատճառը գիտակցելու փոխարեն տարբեր փորձությունների մեջ ընկավ: Իսկ պատճառը մարդու մեղքն էր. ուրեմն՝ այդ մեղքից հեռու մնալով է, որ մարդը կարող է վերադառնալ իր անմահությանը՝ իր հավիտենական կյանքին:

Եւ այսպես՝ մարդկությունը գնաց՝ ստեղծելով այդ ամենը, ավելի հեռանալով Աստծուց եւ նույնիսկ սկսեց մարդկանց աստվածացնել, բայց

այդ աստվածացրած մարդիկ նույնպես մահկանացու մնացին։ Եւ այդ ժամանակ Աստված այնքան սիրեց Իր արարածներին, աշխարհը, որ Իր Միածին Որդուն ուղարկեց, որպեսզի նրանց ցույց տա, ուսուցանի անմահություն գնացող փրկության ճանապարհը։ Տեր Հիսուս, հակառակ բոլոր սպասումների, մարդեղացավ։ Մարդկությունը չէր կարող պատկերացնել, թե ինչպես կարող է Աստված մարդանալ, որովհետեւ նրանց համար մարդն էր աստվածանում, բայց մնում էր էլի մահկանացու եւ անկարող։ Եւ Հիսուս՝ իբրեւ պարզ մի մարդ, ապրեց Իր եղբայրների եւ քույրերի հետ միասին, ապրեց այս աշխարհում եւ Իր կյանքով ու Իր ուսուցումներով ցույց տվեց այն ճանապարհը, որը տանում է դեպի անմահություն։ Եւ Ինքն է, որ ասում է՝ Ես եմ ճանապարհը եւ ճշմարտությունը եւ կյանքը, եւ ոչ ոք կարող է գնալ Հոր մոտ առանց Ինձ. սա է քրիստոնյաների հավատքի հիմքը՝ Հիսուսով գնալ առ Աստված, Հիսուս՝ իբրեւ ճանապարհ փրկության, Հիսուս՝ իբրեւ ճանապարհ Աստծու արքայության, Հիսուս՝ իբրեւ դուռը հավիտենական կյանքի։

Եւ այս վերջին օրերին, երբ մենք հիշատակում էինք մեր Տիրոջ կյանքի վերջին օրերը, եւս մեկ անգամ ի մոտո տեսանք մարդ արարածի էությունը, ոչ թե բնությունը, այլ նրա՝ Աստծուց հեռացած էությունը. Տիրոջը խաչեցին, մահվան դատապարտեցին, բայց Նա մեռելներից հարություն առավ եւ համայն աշխարհին գոչեց՝ Ես եմ կյանքը, Ես եմ ճանապարհը հավիտենության։ Իջավ դժոխք, քանդեց դժոխքը եւ երկինք գնաց, որպեսզի բոլոր փրկվողներին կարողանա Իր օրհնության մեջ պահել։

Ահավասիկ, սիրելինե՛րս, ինչ է այսօրվա խորհուրդը, որ բոլորիս համար ամենացանկալին է. չկա մեկը, որը չուզի անմահություն, չկա մեկը, որ նույնիսկ մահվան մահճում չուզի գոնե մի քանի վայրկյան ավելի ապրել այս աշխարհի մեջ։ Մենք միշտ անհանգստանում ենք՝ հիշելով մահվան մասին, սակայն կյանքի ընթացքում մոռանում ենք այն ճանապարհը, որը մեզ կարող է տանել անմահության։ Եւ կրկին, մենք չենք հեռանում մարդկային մեղքերից, մենք ինքներս չենք կերտում այն զորությունը, այն հավատքը, որով կարող ենք Հիսուս Քրիստոսի փրկչական դռնով անցնել։ Ընդամենը պետք է մեզ հեռու մնալ բոլոր մեղքերից, ապրել մեր Տիրոջ պատվիրաններով, ավելի ճիշտ, կարող եմ ասել, ապրել Նրա նմանությամբ, ինչպես Ինքն ապրեց Իր երկրային կյանքը, մինչեւ իսկ Իր վերջին վայրկյանը երկրային կյանքի, երբ Իր սիրո համար կյանքով վճարեց մարդկությանը փրկելու համար։

Այո՛, ամեն բան գին ունի, նույնիսկ՝ աստվածային սերը։ Հիսուս վճարեց այդ սիրո համար Իր կյանքով, որպեսզի մարդկությանը ցույց տա, որ սա է ճիշտ ճանապարհը։ Ապրենք Հիսուսի կյանքով, ապրենք Հիսուսով, մի կողմ դնենք մարդկային բոլոր տկարություններից ծնված մեղքերը, որոնք դժբախտաբար ամեն վայրկյան մեզ հետապնդում են, բայց մենք նրանց չենք հալածում, մենք նրանց հեռու չենք վանում մեզնից։ Նույնիսկ երբ գալիս ենք եկեղեցի, աղոթում ենք, հավատացյալ ենք, կրկին մոռանում ենք, որ մենք կարող ենք ինքներս մեզ երբեմն խաբել, բայց Տիրոջը խաբել անկարելի է։

Այսօր մեր աշխարհում ամեն մարդ անհանգստացած է իր վարկանիշով՝ ինչ կասեն հանկարծ, ինչ կլինի. այդ կե՛ղծ վախերը, այդ վարկանիշնե՛րը։ Երանի՜ թե այդ նույն մարդիկ այդքան մտահոգված լինեին իրենց խղճի եւ հոգու մաքրությամբ, այդ ժամանակ իսկապես կկանգնեին ճիշտ ուղու վրա։

Մենք անընդհատ խոսում ենք տարբեր չարիքներից, մարդկային թուլություններից, բայց երբեմն նկատե՞լ եք, որ ուրիշների հերոսական արարքներով հիանում ենք, իսկ ինքներս այդ արարքները չենք կատարում։ Բարկանում ենք ուրիշների չար գործերից, բայց արի ու տես՝ ինքներս ավելի մեծ չարիք ենք գործում։ Միայն հիշեք, թե ինչպիսի մեղքեր գործեցին մի քանի օրվա ընթացքում մեր Փրկչի նկատմամբ՝ սկսյալ Նրան դատապարտելուց, դավաճանելուց, հետո լքելուց, ուրանալուց Նրա կատարած բոլոր լավ ու բարի գործերը. զրպարտություն, չարախոսություն, չարանենգություն եւ չար գործողություններ, նույնիսկ ծեծեցին, թքեցին, ծաղրեցին. ահավասիկ, բոլոր այն տկարությունները, որ մարդկությունը, ցավոք, քրիստոնյա կոչվելով, այսօր եւս գործում է իր կյանքում։

Մենք մոռանում ենք, որ ի վերջո, լինելու է Տիրոջ դատաստանը։ Ձեզ, որ միշտ գալիս եք եկեղեցի եւ սուրբ պատարագի ընթացքում քրիստոնյաներիս հավատքի կարեւոր բանաձեւն եք ասում, լսում եւ գիտեք Հավատո հանգանակը, եւս պիտի ասեմ՝ մի՛ մոռացեք երբեք այդ հանգանակի հետեւյալ խոսքերը. «Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»։ Եւ այդ դատաստանից հետո է, որ յուրաքանչյուրը կարժանանա կամ չի արժանանա հարության եւ հավիտենական կյանքի։ Այսօր աշխարհը թվացյալ եւ կեղծ արժեքներ է մեջտեղ բերել. երբեմն ասում են՝ սա քրիստոնեական բարոյականության

արժեքների վրա է, ընդամենը իբր անուններն են փոփոխվում՝ լիբերալիզմ (ազատականություն), դեմոկրատիա (ժողովրդավարություն) եւ այլն, եւ այլն։ Եւ այդպես կամաց-կամաց դուրս են գալիս Հիսուսի տված իրական արժեքները։ Մենք՝ քրիստոնյաներս, ինքներս մեր եւ մեր ազգի փրկության համար պիտի կառչած մնանք Տիրոջ պատվիրաններին։ Եւ գիտեք՝ նույնիսկ այն ժամանակ Հիսուս կարծես տեսնում էր մեր օրերը, երբ ասում էր՝ եթե աշխարհն Ինձ համար ձեզ ատի, իմացե՛ք, որ նախ եւ առաջ Ինձ են ատում։ Այսօրվա համար այս խոսքերն իսկապես իրականություն են. իրական քրիստոնեությունն ատողներն առաջին հերթին, ուրեմն, Տիրոջն են ատում, ուրեմն՝ ի չիք են անում Նրա փրկչական գործը, առաքելությունը եւ աստվածային մեծ սերը։

Սիրելինե՛րս, այս հրաշափառ տոնի օրը, այն օրը, երբ մենք՝ մեկ անգամ եւս հուսադրված քրիստոնյաներս, լսում ենք մեծ ավետիսը, որն սկիզբն է մեր փրկության, որը հիմքն է մեր հավատքի, պահենք անշարժ եւ անարատ։ Եւ դրա համար եթե նույնիսկ մեզ ատեն, ուրեմն մենք Տիրոջ առջեւ իրապես իբրեւ քրիստոնյա ենք ապրում։ Ապրենք քրիստոսակերպ, ապրենք Նրա բոլոր պատվիրաններով, եւ Տերը ողջ ճանապարհին՝ մեր երկրային կյանքի ընթացքում, մեզ հետ կլինի, մինչեւ բացի այն դուռը, որ Ինքն է, որ տանում է դեպի երկնային արքայություն։

Մեկ անգամ եւս փառաբանենք Տիրոջ Հարությունը՝ ասելով՝ «Քրիստոս յարեաւ ի մեռոլոց, Քրիստոս յարեաւ ի մեռոլոց, Քրիստոս յարեաւ ի մեռոլոց»։ Եւ մենք հաստատ ենք մեր հավատքի եւ փրկության ճանապարհին։